ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5520-Ա «11» նոյեմբերի 2026 թ.

ՄԱՐԻՆԵ ԺՈՐԱՅԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.78 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Մարինե Համբարձումյանի հետ 2021 թվականի նոյեմբերի 15-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Մարինե Ժորայի Համբարձումյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 16-ից ազատել «Երևանի Հ. Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի նոյեմբերի 15-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Հ. Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Չիչակյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ